



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ltn  
✓ 359

1999



ՀԱՄԱՊՈՅ

Դ Ա Ս Ա Գ Ի Բ Ք 0

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

Ա. Բ Ո Ւ Ր Գ Ե Ր Ի .

Թ ա ր զ մ ա ն ե ց

ՍՑԵՓԱՆՈՍ ՅՈՎՅ. ՍԱՖՐԱՅԵԱՆ:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՀԱՄԱՐԾՈՒՄ Է ՆԵԿԱՋԵԱՑԻ Ե Կ ԸՆԿ. ՏՊԱՐԱՆՈՒՄԸ:



6/8



ՏԵՂՄԱՆ

ՉԳՐԱԿԱՐ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ

ՎԻՃԱԿԱԿԱՐ

Дозволено цензурою. 2 Апрѣлъ 1873 г. Тифлисъ.

ՏԵՂՄԱՆ ՉԳՐԱԿԱՐ

ԽԱԼՎԻ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

գ 359-ս

28. 36%

8781

Ի Ի Ռ

ՀԱՆԴՈՒՑԵԱԼ ՔՐՈԶ

ԱՄԿԻ ՅՈՎՀԱՆ. ԲԱՐՍԵՎԵԱՆԵԿ

ամեռանալի յիշտուակին

ՆՈՒԻՐՈՒՄ Ե

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ե Հ Ը :

## ԶՈՂՄԱՆՅՈՒԹԸ

ԱՅԺԱԾՔԸ ԾՎԱԾԱՅ ԱՅ ԱՅ


ԱՅԻՄԱՅԱՅՑ ՀԱՅԱՅԱՅԱՅՑ

## ՕՐԱԿԱՐԱՆ:

Պ. Բուրգերի առաջարկած Համառօտ Դասագիրքը  
իմ կարծիքով՝ ուրիշ այս կերպի ձեռնարկներից աւելի է հա-  
մասպատճանում նախկին մանկական հասակի հասկացո-  
ղութեանը։ Գրքոյինս արժանաւորութեան ապացոյց կարող է  
լինել նորա երկարատև զործածութիւնը գերմանիայում, սա  
արդէն 25 անգամ տպագրուել է։ Այս առաջադիմութիւնը  
հիմնվում է աշխարհազրական նիւթի աջողակ ընտրելու և  
նրանից օգուտ.քաղելու վրայ։ Այս համառօտ նկարագութիւ-  
նը ընդհանուր Աշխարհազրութեան իսկապէս աշխարհազրա-  
կան անունների համառօտութիւն (նոմեռլատուրա) է, միայն  
խիստ սիստեմայով զասակարգուած։ Այս աշխարհազրա-  
կան կմադրը կենդանացնելու համար պ. Բուրգերը հետե-  
ւեալ մըջոցներն է զործ զնում եղել. երեխանները միշտ ու-  
նենում էին իրանց առաջին քարտէզներ, որոնց վրայ պի-  
տի ուշադրութեամբ նայէին, և զրգոյին մէջ տուածն էլ  
գտնէին նոցա վրայ. իսկ որ քարտէզի վրայ քաշածը փո-  
քըր առ փոքր պինդ տպաւորուէր ուսանաղաց լիշողու-  
թեան և երեխայութեան մէջ, նա ստիպում էր նոյնպէս  
որ դասաւան մէջ բոլոր անց կացածը նկարէին տեսարակի  
մէջ, որքան էլ անկատար լինէին նկարչութեան առաջին  
փորձերը։ Սորա հետ միասին աշակերտաները միշտ ունէին  
ձեռներին Շակերի Ատլասը, Բացի սրանից պ. Բուրգերը  
աշխատում էր այս չորսացամաք անունները լրացնել ու  
կենդանացնել բերանացի պատմութիւններով մէջ լինելով

սպատմական նկատողութիւններ. և մանաւանդ բնութեան  
ու գանազան երկիրների բնակչաց նկարագրութեամբ.—մին  
չոյնն էլ նա խորհուրդ է տալիս անել իւրաքանչիւրին, ով  
կամենում է գործ դնել նորա գրքայկը.

Կարծեմ էլ ոչինչ չէ հարկաւոր աւելացնել հեղինակի  
խօսքերի վրայ,—այդ կերպի ուսուցանելու գործնական օ-  
գուտը կարծիքի տակ չէ ընկնում, և ինձ մնում է միայն  
ցանկալու, որ մեր ուսումնարաններն ել ընդունեն նորա  
աշխատանքը նոյնպիսի ջերմ եռանդով, ինչորէս ընդունել  
ևն նրան Գերմանիայում:



### § 1.

Երկիրս գնդանե և լողումէ տարածութեան  
մէջ պահպանուելով արեգակի ճգտողական զօրու-  
թեամբ: Երկիրս ունի երկու տեսակ շարժողութիւն.  
Նախ՝ 24 ժամուան ընթացքում մի պտոյտ է անում  
իր առանցքի շուրջը. երկրորդ, 365 օրուան և հա-  
մարեա 6 ժամուան ընթացքում կատարումէ մի շրջան  
արեգակի բոլորը:

### § 2

Երկիրի իր առանցքի շուրջը պտոյտ գալսւց աւ-  
ռաջանումէ օրուայ և գիշերուայ փոփոխութիւնը,  
իսկ արեկի շուրջը պտտելուց սահմանվումէ տարին  
ու ամիսները. երկրի առանցքի թեք դրութիւնը դէ-  
պի արեգակը առաջէ թերում տարուայ եղանակնե-  
րի փոփոխութիւնը և օրերի երկարութիւնը:

### § 3.

Երկրի առանցքի երկու ծայրերը բեկաս են կոչ-  
վում, մէկը կիւսիայն, միւսը հարաւայն: Հասարակածը  
մի շրջանաւոր գիծ է, որ երկրագնտի ( բ լ օ բ յ ս թ )  
վրայով բեկոներից հաւասար հեռաւողութեամբ

անց է կացրած և բաժանումէ երկրագունդը երկու մաս հիւսիսային և հարաւային կիսագնդեր։ Զուգահետառն շրջանները շրջանաւոր գծեր են, որոնք հասարակածի հետ միասին զուգահեռապէս գնում են և բեկոներին մօանալուց փոքրանում են։ Ըստհակառակը, Թջջեռներն աղջանները անց են կենում՝ երկու բեռների վրայով և միջահատում են բոլոր զուգահեռականները և հասարակածը (ուղիղ անկիւններով)։ Երջաններից ամէն մէկը բաժանվում է 360 մաս, որոնք անուանվում են առաջմաններ։

#### § 4.

Զուգահեռական շրջաններից մանաւանդ ուշադրութեան արժանի են։

1) Երկու բեռնային շրջանները — հիւսիսային և հարաւային, որոնք սահմանափակում են երկու ցուրտ գոտիները։

2) Երկու արևադարձները — արևադարձ խեցեգետնի, որ գտնվումէ հասարակածից դէպի հիւսիս և Արևադարձ Այծեղջեր և հասարակածից դէպի հարաւացա միջն գտնվումէ այրեցեալ գոտին։

Երկադարձի և բեռնային շրջանների մէջ տեղերում գտնվում են երկու բարեխառն գոտիները — հիւսիսային և հարաւային։

#### § 5.

Երկրի մակերևոյթը բաղկացած է ջրից ու ցամաքից։ Երկու երրորդ մասը բանումէ ջուրը և մի երրորդ մասը ցամաքը։

#### § 6.

Բոլոր ցամաքը բաժանվումէ 5 աշխարհ։ Եւրոպ, Ասիա, Աֆրիկ, Ամերիկա և Աստիլլան։

Եւաջին երեքը միասին առաջ, կոչվում են նոյնպէս Հին Աշխարհ, — երկու վերջինները Նոր Աշխարհ։

#### § 7.

Ասիան Եւրոպայի և Աֆրիկէի հետ միասին բաղկացնում են առաջին մայր ցամաքը։ Հիւսիսային Ամերիկան Հարաւային Ամերիկայի հետ միասին — երկրորդը, Նոր Հօլանդիան էլ — երրորդ մայր ցամաքը։ Այն ցամաքը, որ շրջապատածէ ջրով և երեք յիշած մայր ցամաքներից ոչ մէկի հետ չէ միաւորվում, կոչվումէ կողմէ։ և եթէ մի կողմից միաւորուած է ցամաքի հետ, և գոնեա երեք կողմից պատած է ջրով, կոչվումէ Անդամաններ։ Կողմէն է հողի այն նեղ շերտը, որ միաւորումէ երկու ցամաք և բաժանումէ երկու ծով։

#### § 8.

Բոլոր ջուրը (ովկիանոսը) բաղկացնումէ հինգ գլխաւոր ծովեր, Հիւսիսային և Հարաւային

յին Սառուցեալովկիանոսները, Մեծովկիանոսները, Հնդկացեալանտեանովկիանոսները:

§ 9.

**Այս** մեծամեծ ծովերի փաքրիկ մասերը կոչվումեն Երերոբական ծովեր: Ծովի ցամաքի մէջ խորասուզվելուց կազմվումեն Խորշ, Գոգ, Ճայ: Նեղուց կոչվումէ ջրի նեղ շերար, որ երկու ծով միաւորումէ և երկու ցամաք բաժանումէ:

§ 10.

Ա. Հերեւային Սառուցեալ ովկեանու շրջապատումէ հիւսիսային բևեռը և հասնումէ մինչեւ հիւսիսային բևեռային շրջանը. նա սահմանափակվումէ նոյնապէս Եւրոպայով, Ասիայով, Բերինգեան նեղուցով, Հիւսիսային Ամերիկայով և Ատլանտեան ովկիանոսով: Երան վերաբերումեն.

1) Սովորակ ծովը Եւրոպայի ափերի մօտ.

2) Կարեակ ծովը և Օբեան իրացը Ասիայի ափերի մօտ.

3) Բերիկ ծոցը Ամերիկայի ափերի մօտ, որ Դևիսի նեղուցով միաւորվումէ Ատլանտեան ովկիանոսի հետ:

§ 11.

Բ. Հարաւային Սառուցեալ ովկեանու շրջապատումէ հարաւային բևեռը և հասնումէ մինչեւ հարա-

ւային բևեռային շրջանը. նա սահմանափակվումէ նոյնապէս Ատլանտեան, Հնդկաց և Մեծ ովկիանոսներով, բայց աշխարհի հինգ մասներից ոչ մէկի հետ չէ սահմանափակվում:

§ 12.

Գ. Մեծ ովկիանոսը ձգվումէ Բերինգեան ներուցից մինչեւ Հարաւային Սառուցեալ ովկիանոսը, և սահմանափակվումէ արևելքում Ամերիկայով և Ատլանտեան ովկիանոսով, — արևմտքում Ասիայով, Նոր Հօլանդիայով և Հնդկաց ովկիանոսով: Նրան վերաբերումեն.

1) “Եոր Հօլանդիայի ափերում” Բառի, Տօրեսի և Բաբոնինքի նեղուցները.

2) Ասիայի ափերում՝ Զինայ, Դեղին, Ջաղանի, Օխոտեան և Կամչադական ծովերը.

3) Ամերիկայի ափերի մօտ՝ Կալիֆորնիայի և Պահետայի ծոցերը:

**Մեծ ովկիանոսը** Բերինգեան նեղուցի միջնորդութեամբ՝ որ գտնվումէ Ամերիկայի և Ասիայի մէջ, միաւորվումէ Հիւսիսային Սառուցեալ ովկիանոսի հետ, Մազելանի նեղուցի միջնորդութեամբ, որ գտնվումէ Հարաւային Ամերիկայի և Հրեղէն Երկիր ասուած կղզու մէջ, միաւորվումէ Ատլանտեան ովկիանոսի հետ:

§ 13.

Դ. Հնդկաց ովկտեռառ սահմանն է Հիւսիսում Ասիան, արևելքում՝ Նոր Հօլանդիան և Մեծ ովկիանոսը, Հարաւում՝ Հարաւային Սառուցեալ ովկիանոսը, արևմտքում՝ Ատլանտեան ովկիանոսը և Ափրիկէն։ Նրան վերաբերում էն։

- 1) Ափրիկէի ափերում՝ Մօղոն բեկն ջրանցքը.
- 2) Ասիայի և Ափրիկէի միջում՝ Արաբիայի ծոցը, կամ Կարմիր ծովը Բաբ - Էլ - Մանդէքն նեղուցով.
- 3) Ասիայի ափերում՝ Պարսկաց ծոցը Ումբէքն նեղուցով, — Բէնգալետն ծոցը և Մալակայի նեղուցը.
- 4) Կյոր Հօլանդիայի ափերում՝ Կարպէհուարէտ ծոցը։

§ 14.

Ե. Աֆլանտեան ովկտեռառ ձգվումէ Հիւսիսային Առուցեալ ովկիանոսից մինչև Հարաւայինը. Նորա սահմանն է արևելքում Սւրոպան, Ափրիկէն և Հնդկաց ովկիանոսը, Արևմտքում՝ Ամերիկան և Մեծ ովկիանոսը։ Նրան վերաբերում էն։

- 1) Եւրոպայի ափերում՝ Հետեսիային և Բայլետն ծովերը, Զիտիցը, Գելերալապարէն նեղուցը, Միջերկան և Ան ծովերը։

- 2) Ափրիկէի ափերում՝ Գ. Աֆիկ մեծ ծոցը.
- 3) Ամերիկայի ափերում՝ Մագելանի նեղուցը, որ տանումէ գէպի Մեծ ովկիանոսը, Կարպայիքէտն ծովը,

Մետուիտայի ծովը, Ա. Լաբենդիտանի ծոցը և Հետղոնի ծոցը։

ԱՇԽԱՐՀԻ ՀԻՆԳ ՄԱՍՆԵՐԸ։

§ 15.

Ա. ԱԽՍՏՐԱԼԻԱ.

Աւտրալիան բարկացած է Նոր Հօլանդիայի մայր ցամաքից, որ գտնվումէ Հնդկաց և Մեծ ովկիանոսների մէջ, Նյոնպէս և Մեծ ովկիանոսում՝ զըսնուած բազմաթիւ կղզիներից։ Նոր Հօլանդիան, որ մեծութեամբ համարեա՛ թէ Հաւասարվումէ Եւրոպային, դեռ շատ քիչ ծանօթ է միջին կողմից։ Արևելեան ափը կոչվումէ Նոր Հարաւային Ուելսայնսեղ, Պորտ - Զակսօն ծոցի մօտ, գտնվումէ Սիդնէյ քաղաքը, — որ Անգլիացոց յանցաւորների գաղթականութեան տեղն էր. Հարաւային ափի վրայ գտնվումէ Մէլբուռն քաղաքը, — Մուռէյ գետից գէպի արևմուտք էլ Ագելայիդա քաղաքը, Հարուստ պղնձէ Հանգերով։

Աշանաւոր կղզիները ու կղզիների խմբերը։

- 2) Ա. Անդիմենի երկիրը, որ Նոր Հօլանդիայից բաժանվումէ Բասի նեղուցով։

2) “Առ Գվենէն, որ Նոր Հօլմաղիայից բաժանն վումէ Տօրեսի նեղուցով.

3) Առ Զեւանդիտն, որ առաջ յայտնի էր իր բնակիչների վայրենութեամբն ու պատերազմական հօգովը. նա բազկացած է երկու կղզիներից, որոնք միմեանցից բաժանումեն կուկի նեղուցով.

4) Բարեկամաւեան կղզիները.

5) Ընէրութեան կղզիները, — գլխաւորն է Տայիա կղզին.

6) Անտվեչեան կղզիները, — գլխաւոր կղզին է գաւայի:

### Բ. ԱՄԵՐԻԿԱ:

Ամերիկայի սահմանն է Հիւսիսային Սառուցեալ ովկիանոսը, Բէֆինի ծոցը և Դեփի նեղուցը, արևելքում Ատլանտեան ովկիանոսը, Մեքսիկայի ծոցը և Կարայիբեան ծովը. Հարաւում Մեծ ովկիանոսը և Մադելանի նեղուցը. արևմոքում Մեծ ովկիանոսը և Բերինգեան նեղուցը: Ամերիկան երկու է բաժանվում Հիւսիսային և Հարաւային. նոքա միմեանց հետ միաւորվումեն Արևելքան Հնդկաստանի կղզիները, որոնք փակվումեն Կարայիբեան ծովով:

Ա. ՀԱՐՍԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ:

### § 16.

## Ա ա ր ե ր ը:

1) Կորդիլերեան անդերը. սոքա ձգվումեն Ամերիկայի հարաւային ծայրիցը Մեծ ովկիանոսի երկայնութեամբ մինչև Պանամեան կիրճը. իսկ նոցա մէկ Ճիւղը Մադրազինայի գետիցը դառնումէ գէպի արեւելք՝ գէպի Կարայիբեան ծովը և անց է կենումնորա երկայնութեամբ մինչև Օրինօկօի գետաբերանը: Այս լեռների գօտիների մէջ շատ հրաբուխներ են հաշվում: Նորա ամենաբարձր գագաթն է Ակօնդագուտա հրաբուխը Զիլիումը, 22,000 ոտ. բարձրութեամբ. Համարեա նորա չափ է Զիմբօրտգօն Կվիտօի մօտ, որ ունի 20,100 ոտ. բարձրութիւն, և Նեազո գի Սիրատա, որ ունի մօտ 20,000 ոտ. բարձրութիւն, — Վերջինը գտնվումէ Տիտիկաչսա ասուած լճից դէպի արևելք, որ գտնվումէ 12,000 ոտ. բարձրութեան վրայ.

2) Օրինօկօի լեռնային երկիրը (Sierra Parima), շղահասումէ Օրինօկօ գետով:

3) Աեռա գէ Մար Ատլանտեան ովկիանոսի ափումը, որից բղխում են Սան-Ֆրանցիսկօ, Պարանա և Ուրուգուա.

4) Բրաղելեայի ներքին լեռնոտ երկիրը (Մասո Գրոսօ շղթան), որից բղնումէն Պարագուայի աղւ բիւրները:

§ 17.  
Գ Ե Մ Ե Ր Ա :

- 1) Մարանիօն, կամ Ամազօն գետը, — Նեղոսից յետոյ աշխարհիս ամենամեծ գետը, հարավից ընդունումէ Ռւկայալի, Մադէյրա և Տօնկանտին գետերը, — Հիւսիսից Նեղրօ.
- 2) Օրինօկօ՝ որ Նեղրօ գետի միջնորդութեամբ հաղորդակցութիւն ունի Ամազօնի հետ.

3) Լա — Պլատան է Պարագուա, Պարանա և Ուրուգուա միացած գետերի գետաբերանը.

4) Սան Ֆրանցիսկօ.  
Սոքա բոլորը թափվումէն Ատլանտիան ովկիանոսը:

Ընդարձակ հարթութիւնները, որոնք ըստ մասին ամէն տարի ողողվումէն. Լեանոսները Օրինօկօի կողմից, — Ամազօն գետի հարթութիւնները, և Պարագուայի ու Լա — Պլատայի Պամպանները:

§ 18

Երկիրները և քաղաքները:

Երկիրների մեծ մասը գեռ ներկայ դարուս լակղբումը գտնվումէին Սպանիացոց իշխանութեան տակ, որոնք նոցա գտելեն, սյսինքն՝

1) Աղոսւմբիս Երկիրը, որ այժմ երեք հասարակապետութիւն է բաժանվում, նոր Գրանադա, Վենեցուելա և Կոլուադոր, Բոդուա, Կարակաս ու Կուիտո մայրաքաղաքներով.

2) Պերուի հասարակապետութիւնը Լիման մայրաքաղաքով, որի համար Կալեա քաղաքը նաևահանգստի տեղ է ծառայում.

3) Բօլիւհայի հասարակապետութիւնը Զուկիւդակա մայրաքաղաքով և մեծ արծաթի համբերով Պոտոգեի մօտ.

4) Չիլիի հասարակապետութիւնը Սէնտիագօ ու Վալպարայիկօ քաղաքներով և Զիլօէ կղզով.

5) Լա — Պլատայի Միացեալնահանգները Բուէնոս Այրէս քաղաքովը.

6) Պըրուգուայի տէրութիւնը Մօնտէվիդէօ քաղաքովը Լա — Պլատայի ձախ ափումը:

7) Պարագուայի տէրութիւնը Պարանա ու Պարագուա գետերի մէջ Ապումիօն քաղաքով:

Պօրտուգալացիք առաջ իշխումէին՝

8) Բրազիլիայի այժմեան կայսերաւթիւնը Ռիո — Պէ — Ժանէյրօ քաղաքով.

9) Գվիանայում (այսպէս է կոչվում բոլոր եղերը Օրինօկօի գետաբերանից մինչև Ամազօն գետի գետաբերանը) Ֆրանսիացիք իշխումն Կայէնային,

Հօլանդացիք Սուրբնամին Պարամարիք՝ քաղաքով,  
Անգլիացիք էսէկվերօխն:

Իրանց անկախութիւնը պահել են.

10) Արառւկանցիք Զիլից դէպի հարաւ.

11) Պատագոնացիք կամ Մագելանի երկրի բը-  
նակիչները:

12) Պեչերեցները Հրեզէն կղզու վայ.

Հարաւային Ամերիկային պատկանումեն նոյն-  
պէս Ֆալկանդեան կղզիները Ա.ալանտեան ովկիանո-  
սում, և կղզիները ժուան Ֆեռնանդեց և Ռօբինզոնի  
կղզին Մեծ ովկիանոսում:

Հարաւային Ամերիկայի ամենահարաւային ծայ-  
րում գտնվումէ Հօնն Հրուանդանը Հերմիո կղզու  
վայ, որ ընկնումէ Հրեզէն երկրից դէպի հարաւ:

Բ. ՀԻՒՍԽԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ:

### § 19.

## Ա Ր Ե Ր Ը:

1) Կորդիլերները շարունակվումեն Մեքսիկա-  
յում, որտեղ բազմաթիւ հրաբուխներ կան, նոցա-  
հետ հիւսիսից կցվումէ ձայռուտ սարի գօտին. մի  
ուրիշ լեռնային շղթայ, նոյնպէս բազմաթիւ հրա-  
բուխներով անց է կենում Մեծ ովկիանոսի ափերի  
երկայնութեամբ, — վերջինին պատկանումէ Եղիսյի

Հրաբուխը, որ համարեած թէ 17,000 ոտ բարձրու-  
թիւն ունի.

2) Ալեհանեան սարերը Հիւսիսային Ամերիկայի  
հարաւ—արևելքան մասում:

### § 20.

## Գետերը և լճերը:

1) 5 կանագեան մեծ ըները. Վերին, Միջիգան՝  
Հուրոն, Էրիէ և Օնտարիօ, Լերկու վերջինների  
մէջ գտնվումէր մեծ Նիագարայի ջրվէժը. բոլոր 5  
ընդհանուր ջրանցքն է Սուրբ Հաւրենախոսի  
գետը, որ թափվումէ համանուն ծոցը.

2) Միախափի աւելի քան 200 ծիկներով. Նը-  
րանցից ամենամեծեն են. աջ կողմից Միսուրի և  
Արկանզաս, ձախից Օհիօ. Միախափին թափվում է  
Մեքսիկայի ծոցը.

3) Ուիօ—դէլ—Նօրտէ թափվումէ Մեքսիկայի  
ծոցը.

4) Կարումբիա կամ Օրեգօն թափվումէ Մեծ  
ովկիանոսը:

Ա.ալանտեան ովկիանոսը թափուող փոքրիկ գետ-  
երն են.

5) Դելմուէր, ուստի օվալաձև և մաս հարաւուն.

6) Հէդզոն:

Ամերիկայի բոլոր հիւսիսային կէսը ծածկուած է անհամար թշերով, որոնք համարեա թէ բոլորը միմիանց հետ հաղըրդակցութիւնն ունին, և իրանց աղքերակներով թափվում են մասամբ Հիւսիսային Սառուցեալ ովկիանոսը, մասամբ Հէդզընի ծոցը: Ամենամեծ ջրանցը դէպի հիւսիս է Մէքէնզի գետը: Միայն ցած բլուրները բաժանում են այս ջրակոյսները լայնարձակ հարթութիւններից կամ լաւաններից:

§ 21

**Երկրներն ու քաղաքները:**

Սպանիայի իշխանութեան տակ մի ժամանակ գտնվում էին.

1) **Միջն Ամերիկայի տէրութիւնները** Նոր Գուատեմալա քաղաքով.

2) **Մեքսիկայի հասարակապետութիւնը** Մէքսիկօ, Վերա—կրուց, Պուէրլա, Ակապուլկօ քաղաքներով և Կալիֆորնիայի ու Խւկատանի թերակղեներով:

Անգլիան ամենից առաջ տիրապետեց.

3) **Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներին** հիւսեալ գլխաւոր քաղաքներով. Վաշինգտոն, Նիւ—Յօրք, Ֆիլադել—Փիա, Բալտիմօրա, ՆիւՕրէն, Սան—Ֆրանցիսկօ և այլն: Նոցա վերաբերում են նոյնպէս Ֆլորիդա թերակղեն, որ Երբեմն Սպա-

նիացոց էր տատկանում,—Մէքսիկայից բաժանուած Տեխասը Նոր Կալիֆորնիայով և Ռուսաստանից բաժանուած Ամերիկայի հիւսիսային արևմտեան ափը Ալէկուտեան և Աղուեսու կղզիներով:

**Մնդղիացոց դեռ պատկանում են հետեւալ երկիրները.**

ա) **Կանադա** Օտավա գլխաւոր քաղաքով և Կուէբէգ ու Մոնրիլ քաղաքներով Ա. Լաւրենախոսի գետի վերայ.

բ) **Կոր Բրազունշվէյգ** ու Նոր Շոտլանդիա թերակղզին Գալիֆաս քաղաքով.

գ) **Նիւ—Ֆառնդլէնդ կղզին.**

դ) **Հերկոնդի երկրները**, միւս բոլոր երկրներով, որոնք 49-րից դէպի հիւսիս են ընկած:

Իրանց անկախութիւնը պահել են.

5) **Խսկիմոնսները** Լաբրադօր թերակղզու վրայ, որոնց մէջ գտնվում են Հեռանգուտերի ընկերութեան քարոզիչների իջևանները, զորոր. Նային.

6) **Գրէնլանդացիք**, որ էսկիմոնսների հիւս մի ծագումն ունին, Գրէնլանդիայումն են, որտեղ գլտնը վում են առևտրական գիւղեր և նոյնպէս քարոզիչների իջևաններ, զոր. Նոր Հեռանգուտ.

7) **Հնդիկների մեծ մասը**, որոնք ապրում են որսով ու ձինորսութեամբ Հէդզընի լայնառարած երկրներում:

Հոգածնեաց ըմբռից՝ § 22. առաջարկ պատճեան ըմբռաց ԱրԵԽՆէՅԱՆ ՀՆԹԿԱՄՍՏԱՆ: բայց ըստին  
ԱրԵԽՆէՅԱՆ ՀՆԹԿԱՄՍՏԱՆ բաղկացածաւէսերեք կղզիների խմբերից.  
1) Բահամեան կղզիները, որոնց թռուումը դըտնը գվանագանի կամ Սան — Սալվադօր, որին ամենից առաջ պատահէց կոլումբոսը Ամերիկան գտնելու ժամանակ 1492 թուին:

2) Մեծ Անտիլերները.

- ա) Պուբա,
- բ) Հայիտի, կամ Սան — Դոմինիգո,
- դ) Եամայկա,
- դ) Պորտուգալիկո:

Պուբան Հաւանա քաղաքով և Պորտուգալիկոն գեռ Սպանիացոց են պատկանում, — Եամայկան Անդիլացոց. Սան — Դոմինիգոի վրայի գերի խափշելները, իրանք իրանց ազատուեցան և հիմնեցին անկախ տէրութիւններ:

3) Փոքր Անտիլերները, որու Բարբարոս, Անտիգուա, Տրինիդադ, Գվադելուպա, Սարտինիկա և ուրիշ շատերը նոքա ըստ մեծի մասին պատկանում են Անգլիացոց, մասամբ նոյնպէս Ֆրանսիացոց, Հօլանդացոց ու Գանիմալքացոց և առաջ մշակվում էին գլխաւորապէս Աֆրիկէի խափշելների ձեռով. բայց 1834 թ. օգոստոսի 1-ից ստրկութիւնը վերացաւ բո-

լորովին Անդղեացոց երկներումը, իսկ 1848 թուից Ֆրանսիացոց ու Գանիմալքացոց երկներումը:

§ 23.

Գ. Ա. Փ. Բ. Կ. Է:

Վիրիկէի ասհմանն է հիւսիսից Միջերկրական ծովը Գիբրալտարի նեղուցով. արևելսկից Ատլանտեան ովկիանոսը, Գվինէի ծոցը. Հարաւելց Հնդկաց ովկիանոսը Մօղաներիկի ջրանցքով, Արաբիայի ծոցով, և միայն Ասիայի հետ միաւորվումէ Սուէսի ջրանցքով

§ 24.

Ս ա ր ե լ ը:

Ամենանշանաւոր հրուանդաններն են.

1) Կանաչ հրուանդանը, իրեւ ամենաարևելատեանը,

2) Բարեյուսոյ հրուանդանը, որ պարզապէս կոչվումէ նոյնպէս Սար, — իրեւ ամենահարաւայինը, և

3) Գարդաֆույ հրուանդանը, իրեւ Աֆրիկէի ամենաարևելեան կէտը:

Հիւսիսային Աֆրիկէի միջով անց է կենում Ատլասը իր Ճիւղերով. այս սարի շարքին հարաւում դպչումէ Բէլադելգերիդ անապատը, և յետոյ հետեւումէ Սահարայի ահագին անապատը, որ ծածկուած է առանձին ովազիաներով՝ իր կղզիներով:

Այսին Ավրիկէում տեղ տեղ կրկին բարձրաւ նուում են սարերը Հարեշտանի Ալտերը գտնվուում են արևելքում, Կարմիր ծովի հարաւային ծայրում, — Նրանցից դէպի հարաւ լուսնի սարերը, որ բարձր լեռնու խմբերով ընկնում են դէպի արևելք Նիանցա լճից. Կօնդօ շարքը ընկնում է դէպի հիւսիս զըմինէի ծոցից:

Հարաւային Ավրիկէում աւելի յայսնի են միայն Կապեան սարերը:

### § 25.

## Ավրիկէի դետերը:

1) «Եղոս գետը իր սկիզբը առնուում է Երկու աղբիւրներով, — Կապոյտ գետով Հարեշտանի Ալպերում, և Սպիտակ գետով, որ բղխուում է լուսնի սարերից Նիանցա (Ուկերեէ) լճի միջնորդութեամբ, և թափվում է Երկու (մի ժամանակ 7) գետառուներով Միջերկրական ծովը.

2) «Եփեր (Կոյնակէս Զօլեբա, Կովարա) իր սկիզբը առնուում է Կօնդօ լեռների շղթայում, առաջ հոսում է դէպի արևելք, յետոյ դէպի հարաւ և թափվում է Գվինէի ծոցը.

3) Անեգալ,

4) Պամբիս —

Երկուան էլ իրանց սկիզբն առնուում են Կարպատեան լեռների շղթայում, և թափվում են Ատլանտեան ովկիանոսը.

5) Զայիրա կամ Կօնդօ իր սկիզբն առնուում է Հարաւային Գվինէի արևելքում և համառում է

6) Կարմիր գետի նման, որ գցանուում է Կապեան սարերում, Կոյնակէս Ալանաեան ովկիանոսը:

«Երբին Ավրիկէում, Սուդանի հարթութեան մէջ գտնվում է Զադ լիճը, որի մէջ թափվում է Հասուի մեծ գետը, — Հարաւային Ավրիկէում գտնվում է Վիբարիա-Նիանցա կամ Ուկերեէ մեծ լիճը, իսկ Նրանից հարաւապելմուեան կողմը (Տագանայիկա կամ Ուջիջի լիճը, որ 700 վերստ երկայնութիւն ունի և 70-ից մինչև 105 վերստ լայնութիւն) Զամբէզի նաւագնաց գետից փոքր ինչ աւելի դէպի հիւսիս դրտնը վում է Նիասա կամ Շիրվա լիճը»:

### § 26.

Արաբիայի ծոցի Երկայնութեամբ գտնվում են Հետեւեալ Երկրները, որոնք ուղղվում են Կեղսով.

1) Հաբեշտանը կամ Արիսինիան, Ավրիկէի միակ Երկիրը, որ հին ժամանակից սկսած պահում է իր քրիստոնէութիւնը, — Գօնդօր քաղաքով և Յուլա (Յուլիս) նաւահանգստով, որ պատկանում է Ֆրանիացոց:

2) Առուրիա Սինաար քաղաքով.

3) Եղիսկոսս Քահիրէ և Աղքամնդրիս քաղաքներով։

Միջերկրական ծովի մօտ գտնվումէ Յ աէրութիւն, որ մի ժամանակ կոչվումէին աւազակների տէրութիւններ։

4) Տրիազօլս Տրիազօլս քաղաքով։

5) Թունիլ Թունիլ քաղաքով։

6) Կլժիր Ալժիր և Կոստանդինա քաղաքներով, —որ 1830 թուրից Ֆրանսիացիք նուռաձելեն։

Ատլանտեան ովկիանոսի կողմից գտնվումեն։

7) Մարօքի Կայսերութիւնը բարձր Ատլասի վըրայ, Ֆեյ ու Մարօքօ քաղաքներով։

8) Անեգամբիա, կամ Սենեգալ և Գամբիի Երկիր Անդլացոց և Ֆրանսիացոց գաղթական քաղաքներով։

9) Վ երին Գվինէա, Սիեռա—Լէօնէ Հրուանդանից, որտեղ գտնվումեն Անգիացոց խափշելների գաղթականութեան տեղերը Ֆրիտառն (աղաս քաղաք) քաղաքով, մինչև Լօպէյ Հրուանդանը. նա բաժանվումէ Պղպեղի, Փղի, Ռսկու և Գերու ափերի, նրան շատ անդամ այցելութիւն են անում Եւրոպացիքը և սորուիների վաճառականութեան գլխաւոր տեղն է.

10) Ստորին Գվինէա, Լօպէյ Հրուանդանից մինչև Նեգրօ Հրուանդանը, Լանդա քաղաքով, —սակաւածանօթ Երկիր է, որտեղ գնումեն միմիայն Պօրտուգալացիք։

11) Ալավեան Երկիրը՝ Հօտէնսոսների հայ. ընկիքը, Կապշտատ քաղաքով, ներկայ Ժամանակումը պատկանումէ Անգլիացոց. Հիւսիսային սահմանամերձ ազգերն են Կաֆրները և Բուշմէնները։

Հնդկաց ովկիանոսի մօտ գտնվումէն՝ Մօղամբիկ, Զանգիբրար և Այան ծովեղերքները, որ սակաւ յայտնի են։

Միջին Աֆրիկէն մինչեւնոր ժամանակս ըստ մեծի մասին անցայտ էր. բազմամարդ Սուդանում, Կովալում և Զադ Ծի վրայ գտնվում են Տիմբուկտու, Սօկոտրա և Կանօ առևտրական քաղաքները։

### § 27.

#### Կ Դ Ղ Ի Ւ Ե Ր Ը:

1) Հնդկաց ովկիանոսում գտնվում են.

ա) Մադագասկար, Աֆրիկէի մեծ կղզին, որ լիքըն է բարձր լեռների շղթաներով.

բ) Մասկարենեան կղզիները. Բուրբոն, որ պատկանումէ Ֆրանսիացոց, Մաւրիկիա կղզին կամ Իլ—Պր—Ֆրանս, որ պատկանումէ Անգլիացոց.

գ) Ամիրանտեան կղզիները.

դ) Աէշշէլեան կղզիները.

ե) Սօկօտրա կղզին.

2) Ատլանտեան ովկիանոսում գտնվում են.

ա) Ա. Հեղինէի կղզին, — սապօլէօն Ա.ի վերջին  
բնակութիւնը, պատկանումէ Անդիացոց.

բ) Կանաչ հրուանդանի կղզիները, Սանտ — Եա-  
գօ դլսաւոր կղզով, պատկանումէն Պօրտուգալացոց.

գ) Կանարեան կղզիները, Պոր. Ֆեռո, Տենե-  
րիֆա և ուրիշները, պատկանումէն Սպանիացոց.

դ) Արագիրա կղզին՝ որ երևելի էր իւր գինով,  
պատկանումէ Պօրտուգալացոց.

ե) Ասորեան կղզիները, ինչպէս օրինակի հա-  
մար Տերտիյրա և Սանտ Միգուէլ, պատկանումէն  
Պօրտուգալիային:

### § 28.

Դ. Ա Ս Ի Ա:

Ասիայի սահմանն է Հիւսիսում Հիւսիսային  
Սառուցեալ ովկիանոսը, արևելքում Մեծ ովկիանո-  
սը և նորա մօտ դանուած ծովերը, Հարաւում Հրնդ  
կաց ովկիանոսը նորա ծոյերով, արևմաքում Արա-  
բիայի ծոցը, Սուէսի ջրանցքը, Միջերկրական ծովը,  
Սև ծովն ու Եւրոպան:

### § 29.

Ա ա ր ե ր ը:

Ամենից առաջ հարկաւոր է նկատել երեք լոյ-  
նատարած սարահարթերը.

1) Գրօբի անապատի սարահարթը՝ որ սահմա-  
նափակվումէ Հարաւում ու Հարաւային արևելքում  
Հիմազյեան, Տիբետեան և Զինաստանի սարերով. Հիւ-  
սային արևելքում Ամուրեան սարերով Մօնչուրիայում.  
Հիւսիսում Ալտայեան սարերով, որոնց գլխումնեն լեռ-  
նային շղթաները, որոնք գնումնեն Մեծ ովկիանոսի ափի  
երկարութենով մինչեւ Բերինգեան նեղուցը և կամատ-  
կա թերակղզու վրայով, — արևմաքում Բօլօր — Տա-  
ղով: Հիմալայեան սարերի շղթայում գտնվումնեն  
աշխարհիս ամենաբարձր գագաթները. Մօնտ — Եւե-  
րէստ 27,200 ոտ. բարձրութենով, Կինչինիւնդա՝ ա-  
ւելի քան 26,000 և Դաւալագիրի՝ աւելի քան  
25,000, ոտ. բարձրութիւն ունեն:

2) Իրանի սարահարթը՝ սահմանափակուած է  
Հիւսիսում Ելբուրսի շղթայով, որ անց է կենում  
կասպից ծովի ափով, և Հինդուկուով, — արևելքում  
Սոլիմանով, որ գտնվումէ Հինդոսի ափի վրայ, — Հա-  
րաւում և արևմաքում Պարսից ծոցի ու Տիգրիս  
գետի ափերի երկայնութեամբ գնացող շղթաներով.

3) Հայոց սարահարթը՝ Եփրատ և Տիգրիս  
գետերի աղբերակների գաւառը, Մասիս կամ Արա-  
բատ սարով, որ ունի 16,200 ոտ. բարձրութիւն:

Այս սարահարթի հետ միաւորվումն:

- 4) Կովկասը՝ որ ձգվումէ կասպից ծովից մինչև լեռ ծովը, և  
 5) Տօրոսն ու Անտիտօրոսը Փոքր Ասիայում։  
 6) Լիբանանը՝ Միջերկրական ծովի ափի վրայ Ասորիքում։  
 7) Սինա և Քորէբ՝ Կարմիր ծովի հիւսիսային երկու ծոցերի մէջ, — երկուսն էլ ունին աւելի քան 7000 ոտ. բարձրութիւն։  
 8) Ուրալեան շղթան՝ Միջիրի ու Եւրոպական բնուսապանի մէջ։  
 9) Գատէմերը և Վինդեան շղթան չընդլսուանում։

Գօրի անապատը շրջապատում էն հետեւալ հարթութիւնները. արևմաքում և հիւսիսում Թաթարստանը և Վիրիքը. արևելքում Զինսաստանի հարթութիւնը, հարաւում Հնդկանի հարթութիւնը։ Դէպի արևմուսք Դանից զանվումէ նոյնպէս Նիբառի ու Տիգրիսի միջի հարթութիւնը։

§ 30.

Լճերն ու դետերը։

Եմնամեծ լճերն են՝ կասպից ծովը և Արական լճը։

Գետերի մեծ մասը բղխումէ Գօրի անապատի լեռնային պատկից և ուղղվում է ամէն կողմերը.

- 1) Հինդոս կամ Սինդ,  
 2) Գանգէս Ջումայի հետ,  
 3) Բրահմապուտրա, —  
 երեքն էլ չնդսատնում դէպի հակամ Մերձակայ չնդկաստանումն են.  
 4) Իրաւապի,  
 5) Մէջկօնդ կամ Կամբաջա, երկուսն էլ չեռաւոր չնդկաստանումն են,  
 6) Կանստէկիանդ կամ Կապոյտ գետը,  
 7) Կօնհօ կամ Գեղին գետը, —  
 երկուսն էլ Չինաստանում, պէսի  
 8) Կմուր Մանչժուրիայում,  
 9) Անա Ալդանի հետ,  
 10) Ենիսէյ, Բայկալեան Ծի ջրանցքով, պէսի  
 11) Օր Իրավիչ հետ, —  
 երեքն էլ Միջիրումն են,  
 12) Ալիր,  
 13) Կմուր,  
 երկուսն էլ Արալեան լիճն Պէսի արևելք են թափում։

Հայոց սարահարթում սկիզբն են առնում։

- 14) և 15) Եփրատ, և Տիգրիա, որոնք միմանց հետ խառնուելով գոյացնում են Շատ — էլ Արաք անունով գետը, որ թափվումէ Պարսից ծոցը։

- 16) Ուրալ,  
 17) Կոլդա — Եւրոպայից։

§ 31.

**Երկրագներն ու քաղաքները:**

- 1) **Ասիական Ռուսաստանը, որի մասերն են.**
- ա) **Արևմտեան Սիբիրը Տօֆոլսկ, Տօմս և Բարնաուլ քաղաքներով.**
- բ) **Արևելքան Սիբիրը՝ Կրամնօեարսկ, Իրկուտսկ, Ներչնսկ և Եակուտսկ քաղաքներով.**
- գ) **Օսվեզերեայ Սիբիրը՝ Զուկոտեան Երկրով, Կամչատկա թերակղզով, Ամուրի գետաբերանով և Պետրոպալովսկի, Այեան, Նիկոլաևսկ և Բլագովեշշենսկ քաղաքներով.**
- դ) **Վիրգիների անապատը իր ամբութիւններով:**
- 2) **Ասիական Տաճկաստանը, որին վերաբերում են.**
- ա) **Փոքր Ասիան՝ Զմիւռնիա քաղաքով.**
- բ) **Հայաստանը՝ Երզրում քաղաքով.**
- շ) **Եփրատի և Տիգրիսի վրայ գտնուած Երկրները՝ Բաղդադ և Բասորա քաղաքներով.**
- դ) **Ասորոց Երկիրը՝ Գամասկոս, Հալէպ և Բէյրութ քաղաքներով.**
- ե) **Պաղեստին՝ Երուսաղէմ գլխաւոր քաղաքով**
- դ) **Կիպրոս Կղզին Միջերկրական ծովում:**
- 3) **Արաբիան՝ որ մշակուած է միայն ափերի վրայ, և շատ պաղարերէ, —Մէքքէ, Մեղինէ և Մաք-**

քաղաքներով արևմտեան ափի վրայ. Ագէն քաղաքը նաւահանդսասով, որ Անդլիացոց սեպհականութիւնն է.

4) **Իրան, որ բաժանվումէ Երկու մասը. Արևմտեան Իրան կամ Պարսկաստան և Արևելեան Իրան. — Վերջինը կազմումէ Աֆղանստան և Բելուջիաստան տէրութիւնները.**

ա) **Արևմտեան Իրան կամ Պարսկաստան թէհրան, Սպահան ու Գերաս քաղաքներով.**

բ) **Աֆղանստան՝ Կարուլ քաղաքով.**

դ) **Բելուջիաստան՝ Կիլատ քաղաքով.**

5) **Հնկան Թաթարիա (Թուրքեաստան) Սիրի և Ամուրի Երկարութեամբ Բուխարա, Սմրդանդ և Քիւա քաղաքներով:**

6) **Հնդստան կամ Մերձակայ Հնդկաստանը Համարեա թէ բոլորը հպատակումէ Խլոսպացոց.**

ա) **Անդլիացիք աիրում Են գրեթէ ամբողջ Երկրին հետեւեալ զլսաւոր քաղաքներով. Կալկաթա Պանդէսի գետառութի՝ Գուգլիի վրայ, Ալագաբադ Զումնայի Գանգէսի հետ խառնուելու մօտ, Լահօր՝ Պենչաբի վրայ, Մադրաս արևելեան (Կաբուճանդէլան) ափի վրայ, և Բօմէջ արևմտեան ափի վրայ, (որի հարաւային մասը կոչումէ Մալաբար, իսկ բոլոր թերակղզու ամենահարաւային ծայրն է Կօմօրին հըրուանդանը. Անդլիացոց պատկանումէ նոյնպէս Ցիլුն**

կղղին (կինամոնի կղղին), և Տրանկիրար գաղթատեղը  
որ Գանխմարքացիք տուին նրանց.

բ) Պօրտուգալացոց պատկանումեն Գօան ու  
Դիուն.

գ) Գյրանսխացոց—Պօնդիշերի:

7) Եռաւոր Հնդկաստանում Հարկ է նկատել

ա) Բիրմանի տէրութիւնը Աւա և Ամարապու-  
րա քաղաքներով,—Ռանգուն հարաւային ափի վրայ  
պատկանումէ Անդղիացոց.

բ) Սիամի տէրութիւնը Բանկօմ գլխաւոր քա-  
ղքով.

գ) Արևելքան մասում Անամ, որտեղ կային Տօն-  
կին ու Կօխինիխնա տէրութիւնները,—Հարաւային ա-  
փում Ֆրանսխացիք տիրում են Սայգուն նաւահան-  
գատին:

դ) Մալակա թէրակղղին Ռօմանիա Հրուանդա-  
նով և Մալակա քաղաքով.

ե) Մինդապուր կղղին ու քաղաքը, Մալա-  
կայի հարաւային ծայրում, որ պատկանումէ Անդ-  
ղիացոց:

8) Չինաց կայսերութիւնը, որ պարունակումէ  
իր մէջ.

ա) Բուն Չինաստանը՝ Պեկին, Նանկին, Կանտոն  
քաղաքներով,—Փոքրիկ Մակաո կղղով և քաղա-  
քով, որոնք պատկանումեն Պօրտուգալացոց, և

Հօնդկոնդ կղղով, Կանտոնի մօտ, որոնք պատկանում  
են Անդղիացոց.

բ) Տիբետը՝ որ բաժանվումէ վոքը ու մեծ  
Տիբետի և բոլոր կորվումէ բարձր սարերի շղթա-  
ներով, և ասա գլխաւոր քաղաքով.

գ) Արևելքան Թուրքեստանը (Չինաց Թուրքես-  
տանը) Եարկանդ քաղաքով.

դ) Մանգուկան կամ մեծ լեռնային պահի, որ  
շրջապատումէ Գօրի անապատը, միջին մասը, Ու-  
րագա գլխաւոր քաղաքով.

ե) Մանչժուրիան ու

զ) Կօրէա թէրակղղին,—գմնեայ լեռնային եր-  
կըրներ, որոնք գտնվումեն Սեծ ովկիանոսում:

է) Հայնան ու Ֆօրմօզա և մի քանի վոքը կըդ-  
գիներ:

9) Վաղօնի կայսերութիւնը բաղկացած է  
միայն կղղիներից.

Ամենամեծերն են՝

ա) Կիւպոն՝ Ցեդօ և Միակօ քաղաքներով,

բ) Կիւուսիոն՝ Նանդասակի քաղաքով.

սրան վերաբերում են նոյնպէս Կուրիլեան կղղիների  
մի մեծ մասը:

§ 32.

ՀՆԴԿԱՅ ԱՐՔԻՊԵԼԱԳՈՍՔ:

Կը ան վերաբերեալ կղզիները գտնվում են չեռաւոր իրանի և Աւստրալիայի մէջ և բաժանվում են շատ խմբերի.

1) 4 մեծ ջօնդեան կղզիները.

ա) Առևմատրա,

բ) Վաւա՝ Բատաւիա դլիսաւոր քաղաքով,

գ) Բօրնէօ,

դ) Ցելեբէս,

2) Փաքը ջօնդեան կղզիները, ջաւայից դէպի արևելք զոր. Ֆլորիս, Տիմոր ևայլն.

3) Մօլուկի կամ անուշահոտ արմատեղէնս-ների կղզիները Ցելեբէսի և Նոր Գվինէջի մէջ, զոր. Ցերամ, Ամբունա, Զիլօլօ, և այլքն,—բոլոր այս կղզիների վրա Հօլանդացիք ունին երևելի գաղթատեղէր և առևտրական քաղաքներ.

4) Փիլիպեան կղզիները, զոր. Լիւսոն, կամ Մանալա, Սուլանիացոց գաղթատեղերով:

§ 33.

Ե. Ե Ւ Պ Պ Ա:

Եւրոպայի սահմանն է արևելքումԱսիան, հարաւում Սև և Միջերկրական ծովերը, արևմոքում Ատլանտեան ովկիանոսը, Հիւսիսում Հիւսիսային Սառուցեալ ովկիանոսը:

Կը ան շրջապատող բազմաթիւ ծովերի, ծոցերի և նեղուցների մէջ ուշադրութեան արժանի են մասնաւանդ:

- 1) Սպիտակ ծովը,
- 2) Հիւսիսային ծովը,
- 3) Ակագեռակ՝ Նորվեգիայի և Իւտլանտիայի մէջ,

4) Կատեգատ՝ Շվետի և Իւտլանդիայի մէջ,

5) Ջունդ, մեծ և փոքր Բէլտ՝ Շվետի, Դանիկարգայի կղզիների և Շլեզվիգի մէջ,

6) Բալթեան ծովը Ոիդայի, Ֆինեան և Բօտնեան ծոցերով,

7) Ջրանցքը (Լամանշ) Կալէ նեղուցով,

8) Իրանուեան ծովը Գէորգի և Հիւսիսային ջրանցքներով,

9) Բիսկայեան ծոյը:

Պիբրալտարեան նեղուցով մտնում ես.

10) Միջերկրական ծովը. Նորա մէջ նկատիր.

11) Լիօնեան (Golfe du Lion) և Զենովայի ծոցերը,

12) Տիրենեան ծովը՝ Իտալիայի, Կորսիկայի, Սարդինիայի և Սիկիլիայի մէջ,

13) Բոնիֆաչիո նեղուցը՝ Կորսիկայի և Սարդինիայի մէջ,

14) Մեսինեան նեղուցը՝ Իտալիայի և Սիկիլիայի մէջ,

- 15) Յոնիական ծովը Տարենտեան ծոցով,  
 16) Աղբիական ծովը Տրիէստի և Վենետիկի  
 ծոցերով,  
 17) Կոρչիակելադոսը կամ Լդէյական ծովը,  
 18) Պարգանելեան նեղուցը կամ Հելեսպոն-  
 տոսը,  
 19) Մարմարեան ծովը կամ Պրօպօնտոսը,  
 20) Կոստանդնուպոլսոյ նեղուցը կամ Կոս-  
 տոպոլը,  
 21) Սև ծովը, վերջապէս  
 22) Կզախու ծովը:

§ 34.

**Ս ա ր ե ր ը :**

Ա. ՀԱՐԱՒԱՅԻՆ ԵԽՐՈՓԱՅՈՒՄ:

- 1) Սպանիայի սարերը.  
 ա) Պիրենեան լեռները,—Ֆրանսիայի և Սպա-  
 նիայի սահմանի վրայ.  
 բ) այս լեռներից դէպի տրեմուտք մինչև Ֆի-  
 նիստեռէ հրուանդանը ձգվումէ կանտարբօ—Աս-  
 տուրեան շղթան.  
 գ) համարեա թէ Սպանիայի մէջ տեղում՝  
 գուադարամա շարքը և աւելի հեռու դէպի արե-  
 մուտք Պօրտուգալիայում—Սիեռա Էստրելիա.

- դ) աւելի հեռու դէպի հարաւ Սպանիայում—  
 Սիեռա Նեադա մինչև Գիբրալտարեան նեղուցը:  
 2) Ալպեան լեռները և նոցա Ճիւղերը.  
 ա) Ալպեան սարերը անց են կենում Խտալիայի  
 Քերակղու վրայով բոլը նրա երկայնութեամբ Սի-  
 կիլիայից մինչև Զենովա.  
 բ) Ծովային Ալպերը Զենովայի ծոցի վրայով.  
 զ) Բուն Ալպերը, որ անց են կենում Խտա-  
 լիայի հիւսիսային արեմանեան մասնով, Զուիցերիա-  
 յով և հարաւային Գերմանիայով. նոցա ամենա-  
 բարձր գագաթներն են՝ Ալպերի արեմանեան մաս-  
 նում—Մօնթան Սալյայում, Ճենեայի Ծից փոքր  
 ինչ աւելի հարաւ, 14,800 ոտ. բարձրութեամբ.  
 արեւելեան գերմանական մասնում՝ Օրալէս Խտալիայի,  
 Տիրոլեմի և Զուիցերիայի միջի սահմանում, և  
 Գլոկներ դէպի հարաւ Զալյուտրգից, Երկուսն ել  
 զրեթէ 12,000 ոտ. բարձրութիւն ունին։  
 դ) Ալպերի մասները, զանազան անուններով  
 հետեւելով Աղբիական ծովի արեւելեան ավին, գնում  
 են դէպի հարաւ՝ դէպի Եւրոպական Ցաճկաստանը,  
 և նորա մէջ բաժանվումեն.  
 ե) Բալկան կամ Հիմուս գնումէ դէպի արե-  
 ւելք Սև ծովից.  
 զ) աւելի հեռու դէպի հարաւ ձգվումէ Հինդ,  
 որ իր Ճիւղերով Յունաստանում հասնումէ մինչև

Մատապան հրուանդանը, որ գտնվումէ Եւրոպայի  
ամենահարաւային ծայրում:

Բ. ՄԻԶԻՆ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ:

- 1) Կարպատները, որոնք շրջապատումեն հիւ-  
սիսից և արևելքից Հունգարիայի երկիրը.
- 2) Բոհեմիայի լեռնային պասակը, նրան վերա-  
բերում են.
- ա) Փիլստելի շարքը,
- բ) Հանքային շարքերը,
- տ) Տիտանեան շարքերը Սուդեաներով,
- դ) Մորաւիայի լեռնոտ երկիրը,
- ե) Բոհեմեան անտառը,
- 3) Տիւրինգերվայլդ, Վեռայի և Զաալայի մէջ.
- 4) Ռեօն, Մայնի և Ֆելդի մէջ.
- 5) Շվարցվայլդ Հոենոսի, Նեկարի և Դանու-  
բի մէջ, (2—5 բոլորը գերմանիայումն են),
- 6) Խորա, Հռոդանոսից աւելի ցած Ֆենեայից  
մինչև Հոենոսը Բաղելի մօտ, Զուիցերիայում,
- 7) Վարդէնները Մասսի վրայ.
- 8) Առգեգները Հոենոսի ձախ ափում.
- 9) Աւէնները Հռոդանոսից դէպի արևմուտք.  
(7-ից մինչև 9 Ֆրանսիայումն են).
- 10) Գրաց, որ կանգնած է համարեա թէ  
միայնակ հիւսիսային գերմանիայում:

Գ. ՀԻՒՍԻՍՍԻՆ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ:

- 1) Անգլիայում.
- ա) Կորնուէյլսի սարերը Լանդսենդ հրուան-  
դանով.
- բ) Ուէյլեան շարքը.
- տ) Պիկի շարքը.
- 2) Շոտլանդիայում.
- ա) Գրամագեան շարքը,
- բ) Շոտլանդեան բարձր սարահարթը.
- 3) Նորվեգիայում.
- ա) Լոնդֆիէլդները և Գոֆրեֆիէլդները.
- բ) Կիեյլները Նորդկաստով Մագերէօ կղզու-  
մայ, — Եւրոպայի ամենահիւսիսային ծայրն է.
- 4) Ուուսաստանում Վալդայեան ցած սարերը  
կամ Վոլգնեան անտառը:

Հրաբուխ սարերն են. Էտնա Սիկիլիայում, Վե-  
զուվ Իտալիայում, Հեկլա Իսլանդիայում, և այլքն:

§ 35

Հարթութիւնները:

- 1) Լոմբարդիա կամ Պօ գետի հարթութիւ-  
նը Ալպեան ու Ապեննեան սարերի մէջ.
- 2) Հունգարիայի կամ Ստորին, — Դանուբի հար-  
թութիւնը, որ հիւսիսից և արևելքից սահմանա-

փակվումէ կարպատներով, հարաւից և արևմաքից  
Ալպերի մասներով և ոռոգվումէ դանուբով ու Տի-  
սայով.

(3) **Վերին դանուբի հարթութիւնը** Բաւարիա-  
յում, Ալպեան սարերի ստորոտից մինչև դանուբը.

(4) **Հռենոսի հովիտը** Վօգեզների և Շվարց-  
Վալդի մէջ.

(5) **Հռոդանոսի հովիտը** Սևէնների, Ալպերի և  
Խորայի մէջ:

Համարեա թէ մի անընդհատ մեծ հարթու-  
թիւն ձգվումէ Պիրենեան սարերի ստորատից արև-  
մտեան ֆրանսիայի միջով, յետոյ Հիւսիսային ու  
Բալթեան ծովերի երկարութեամբ հիւսիսային գեր-  
մանիայի միջով մինչև Խուսայ լայնատարած հար-  
թութիւնը, որ միայն Ուրալեան շարքովն է բաժան-  
վում Սիբիրի լայնատարած հարթութիւններից:

### Գ Ե Մ Ե Ր Ը:

Ա. **Հիւսիսային Սառուցեալ ովկիսանոսը** թափ-  
փումէն.

(ա) **Պեչորա**, որ Կայ ամպանին:

(բ) **Մեղչն**, Արևոտ անձնայի և անձնայի

(գ) **Հիւսիսային Գվինան Վիչեգդայի հետ,**

(դ) **Օնեգա** (Սպիտակ ծովը):

Բ Բալթեան ծովը և նորա ծոցերը թափվումէն.

1) **Ոռոսաստանից.**

(ա) **Վեա—Լադոգայի, Օնեգայի, Սայմայի, Իլ-**  
մէնի և ուրիշ լճերի հոսանքը—Ֆինեան ծոցը:

(բ) **Վարովա, Պեյզուս լճի հոսանքը,**

(շ) **Արևմտեան Դվինա—Ռիգայի ծոցը.**

2) **Ոռոսաստանից և Պրուսիայից.**

(ա) **Վեման կամ Մեմել,**

(բ) **Վիլա Բուգի հեա.**

3) **Շվետից.**

(ա) **Մօտալա—Էլֆ, Վետեր լճի հոսանքը,**

(բ) **Մելար լիճը.**

4) **Գերմանիայից.**

Օդեր Վարտի հետ.

5) **Կատեգատը թափվումէ Գօտ—Էլֆ Վե-  
ներ լճի հոսանքը, Շվետից.**

6) **Սկագեռակը թափվումէ Գլոմէն Նորվե-  
գիայից:**

(ա) **Հիւսիսային ծովը թափվումէն.**

1) **Գերմանիայից.**

(ա) **Էլբա, Մօլդաւյի, Էգերի, Վուլգայի, Զա-  
ալի և Հաւելի հետ.**

(բ) **Վեգեր, որ բաղկացած է Վեռայից և Ցու-  
դից՝ Ալեր Ճեղով:**

(շ) **Հռենոսը Աարի, Նեկարի, Մայնի Ուգնիցի**

- Հետ միասին, — և անի, Մօգելը ու Լիպեի հետ.
- 2) Արդերլանդիայից.
  - ա) Առաս, որ միաւորվումէ Հռենոսի գետաբերանի հետ,
  - բ) Շելդա.
  - 3) Անգլիայից.
  - Տեմզա.**
  - 4) Լամանշի ջրանցքը թափիւմէ Անլ Ֆրանսիայից.
  - Դ. Եղանական ոլկիանոսը թափիւմէն.
  - 1) Փրանսիայից.
  - ա) Լուարա,
  - բ) Գարոն, որ միաւորուելով Գորդոնի հետ կոչվումէ Ժիոնդ.
  - 2) Սպանիայից.
  - ա) Պուերո,
  - բ) Տաջօ,
  - դ) Գվադեանա,
  - դ) Գվադալդիվեր.
  - Ե. Միջերկրական ծովը թափիւմէն.
  - 1) Սպանիայից,
  - իշրո.
  - 2) Փրանսիայից.
  - Հոռանոսը Սօնի հետ
  - 3) Իտալիայից.

- ա) Վանս.
- բ) Տիբերիոս:
- զ) Արրիական ծովը թափիւմէն.
- Իտալիայից.**
- ա) Պո,
- բ) Էչ:
- է. Աւ ծովը թափիւմէն.
- 1) Գերմանիայից, Հռենգարիայից և Տաճկաստանից.
- Դանուբ՝ Իլերի, Լեխի, Խարի, Խնի, Մարինի, Կրավայի, Սաւայի, Տիսայի, Գրուտի հետ.
- 2) Ուստաստանից.
- ա) Դնեստր՝ Բերիօզինայի, Պրիպետի ու Պէստայի հետ.
- բ) Դօն Հիւստային Գօնեցի հետ (Ազախու ծովը).
- ը. Կասպից ծովը թափիւմէն.
- Վոլգա Օկայի ու Կամայի հետ:

§ 37.

- Կղզիները և թերակղզիները:**
- Ա. Թերակղզիները.
- 1) Ականդինաւեան թերակղզին, որ պարունակումէ իր մէջ Շվեյցարիա և Նորվիգիա թագաւորութիւնները.

- 2) Խւտլանդիա թերակղղին, որ հիւսիսային  
մասնով պատկանումէ Դանիմարքային,
- 3) Պիրենեան թերակղղին, որ պարունակումէ  
իր մէջ Սպանիա հասարակապետութիւնը և Պօրտու-  
գալիա թագաւորութիւնը.
- 4) Խուտլիայի թերակղղին.
- 5) Մօրէա թերակղղին Յունաց թագաւորու-  
թեան մէջ.
- 6) Վրիմ թերակղղին հարաւային Ոռուսաստա-  
նում:
- Բ. Կղղիները.
- 1) Բրիտանիան — Մեծ Բրիտանիա և Իրլանդիա,  
2) Խուտլիա Ատլանտիան ովկիանոսում.
- 3) Դանիմարքայի Կղղիները. Զելանդիա, Ֆիւօնիա  
և այլքն, կատեգատի և Բալթեան ծովի մէջ.
- Միջերկրական ծովում.
- 4) Բալէարեան կղղիները — Մայորկա ու Մի-  
նորկա,
- 5) Կօրսիկա,
- 6) Սարդինիա,
- 7) Սիկիլիա,
- 8) Էլլաս,
- 9) Մալթա,
- 10) Ջոնիական կղղիները, Աքրու, Ալուֆու,
- 11) Կանգիա կամ Կրիտ:

Ալբինիակագուում շատ կղղիներ կան, որոնց  
վրայ բնակվում են Յոյներ և պատկանումեն մասամբ  
Յունաստանին, մասամբ Տաճկաստանին, զոր. Տաղոս,  
Լիմոս, Եւրէա (Կեղլոպոնա), Փարոս, Կալաս, Հիդրա  
և ուրիշները:

§ 38.

Ա. ՀԱՐՍԻԱՅԻՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵԽՐՈՊԱՆ:

- Երկրներն ու քաղաքները:**
- 1) Պիրենեան թերակղղու վրայ գտնվումեն՝  
ա) Պօրտուգալացոց թագաւորութիւնը Իսա-  
բոն մայրաքաղաքով Դուրօի վրայ.
- բ) Սպանիացոց հասարակապետութիւնը Մադ-  
րիդ մայրաքաղաքով Սանսանարէսի՝ Տաղօի Ճիւղի  
վրայ, և Քաղաքներով՝ Բալցելոն Միջերկրական ծո-  
վի մօտ, Կադիքս Ատլանտիան ովկիանոսի վրայ.
- շ) Գրանսիացոց հասարակապետութիւնը Փա-  
րիզ մայրաքաղաքով Սէնի վրայ, և Քաղաքներով՝  
Լիօն Հռոդանոսի վրայ, Մարսէլ Միջերկրական ծովի  
մօտ, Բօրդո Հռոնի վրայ.
- 3) Խոտլիա՝ որ պարունակումէ լը մէջ նոյն  
անունով թագաւորութիւն Հռոմ մայրաքաղաքով,  
բաժանվումէ.

շ) Հարաւային Խտալիայի՝ Նիասդօիս քաղաքով. սրան վերաբերումէ նոյնակէս Սիկիլիա կղզին Պալերմօ և Մեսենա քաղաքներով։

բ) Միջին Խտալիայի քաղաքներով։ Հռովմ Տիբերիոսի վրայ, Ֆլորենցիա Առնօի վրայ, Պարմա, Մոցենա և Անկոնա։

գ) Վերին Խտալիայի քաղաքներովս. Վենետիկ, Մանտուա և Վերոնա, — Տուրին Պօի վրայ, Միլան Օլօնի վրայ, և Զենովա Տովեզերեայ քաղաքով։

4) Ջուիցերիա Հետեւեալ քաղաքներով. Բեռն Ալրի վրայ, Բավել Հոենսոնի վրայ, Ցիւրիխ Ցիւրիշ Խեան լծի մօտ, Ճենեւա Ճենեայի լծի մօտ։

5) Վիդելանդները բաժանվումեն երկու թագաւորութիւն։

ա) Բելլիա Բրիւսէլ մայրաքաղաքով և Անտվերպէն քաղաքով Շելլի վրայ։

բ) Հոլանդիա Ոմաներդամ և Հագա մայլան քաղաքներով, և Ռոտերդամ քաղաքով Մասսի վրայ։

6) Բրիտանիայի տէրութիւնը քաղաքներով՝ Լոնդօն, Տեմզայի վրայ, Լիվուրուլ Սերսէյի վրայ, Պօրտսմուտ Լամանշ Ծրանցքի մօտ Անգլիայում, — Էդինբուրգ և Գլազգո Շոտլանդիայում, Դուբլին Իրլանդիայում։

Բ. ՀիՒՍԻՍԱՑԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒՐՈՊԱՆ.

1) Ականդինաւեան թերակղզին պարունակումէ Շվետ թագաւորութիւնը Ստօկհոլմ մայրաքաղաքով Մելար լծի մօտ, և Նորվեգիա թագաւորութիւնը Քրիստիանիա գլխաւոր մայրաքաղաքով։

2) Դանիմարքա թագաւորութիւնը Կօպենհան գէն քաղաքով Զելանդ կղզու վրայ։

3) Եւրոպական Ռուսաստանը Ս. Պետերբուրգ մայրաքաղաքով Նևա գետի վրայ և Մոսկով՝ Մոսկով գետի վրայ։ Բայցի սրանցից, Ներքին քաղաքներից նշանաւոր են. Տվեր, Երամաւլ, Ռիբինսկ, Կոստրամա, Նիժնի Յովգորօդ, Կազան, Սիմբիրսկ, Սամարա և Սարատով — Վոլգայի վրայ, — Օրէօլ, Կալուգա և Ռեւազն — Օկայի վրայ, — Սմօլէնսկ և Կիև — Գնեպիրի վրայ, — Վարչաւա Վիխլայի վրայ և Հաստանում, Նովգորօդ Խմէն լծի մօտ, Վլադիմիր Կլեազմի վրայ։ Ծովեզերեայ քաղաքներից. Արխանգելսկ Սպիտակ ծովի մօտ. Ռիգա Բալթեան ծովի մօտ. Օդէսա և Սևաստոպոլս Սև ծովի մօտ. Ոշտարիսան Կասպից ծովի մօտ, և Գելմինդ Փօրս Ֆինեան ծոցի մօտ Ֆինլեանդիայում։

4) Եւրոպական Տաճկաստանը Կաստանդնուպոլիս մայրաքաղաքով Կոստանդնուպոլիս նեղուցի վրայ։

5) Յունաստանի թագաւորութիւնը Աթէնք մայրաքաղաքով. 1863 թուից սկսած նրան պատկանումէն նոյնակէս Յոնիական կղզիները։

գ. գ. Ե. Բ. Մ. Ա. Ն. Ի. Ա.

1) Աւարիայի կայսերութիւնը գլխաւոր քաղաքաւովաւ կամ Վիենա և Լինց Դանութի վրայ Աւստրիայում, Պրադա Մօլդաւի վրայ Բօհեմիայում, Բրիւն Շվարցաւի վրայ (Մօրաւայի Ճիւղի վրայ) Մօրաւիայում, Գրեց Շտիրիայում, Զայլֆրուրդ Զալֆի վրայ, Տրիէստ Ադրիանան Տովի մօտ, Դնարուկ Տիրոլում Խի վրայ, Կրակով Վիևլայի վրայ, Լեմբերգ Գալիցիայում, Օֆէն—Գեստ և Որեսրուդ Դանութի վրայ Հունգարիայում: Աւարիային վերաբերում են նոյնպէս Սեղմիզբադիա, Ալաւոնիա, Կրօացիա և ուրիշ շատելը:

2) Պրուսիայի թագաւորութիւնը Բերլին մայրաքաքով Գաւելի Ճիւղի Վպրէի վրայ, Կէնիդսբուրդ Պրեգելի վրայ Բալթեան Տովի մօտ, Բրենլաւ և Շտետին Օդէրի վրայ, Մադելբուրդ Էլբայի վրայ, Կորլէնց, Կէն և Ստրաւուրուրդ Հունոսի վրայ, Ալիէն Նիդերլանդնեան սահմանի մօտ:

3) Բաւարիայի թագաւորութիւնը Միւնիէն մայրաքաքով Խզարի վրայ և Քաղաքներով. Նիւրէնբերգ Պեգնիցի վրայ, Առևուրդ Լեխի մօտ. Ռեգէնսբուրգ Գանութի վրայ, Բամբերգ Ռեգնիցի վրայ, Վիւրցբուրգ Այնի վրայ, Շպեյէր Հունոսի վրայ:

4) Արտեմբերդի թագաւորութիւնը Շտուտգարտ մարտ մայրաքաքով Նեկարի մօտ, Ռյում ամրոցով

Դանութի վրայ, Տիւրինգէն ու Գելլերօն Նեկարի վըրայ:

5) Ավանդիայի թագաւորութիւնը Գրեգէն մայրաքաղաքով Էլբայի վրայ և Լեյպցիխ Էլստերի և Գլեյմի վրայ, որ Զաալայի Ճիւղերն են.

6) Հեսէն Դարմշտադի դքսութիւնը Դարմշտադ մայրաքաղաքով և Մայնց ամրոցով Հունոսի վրայ.

7) Բադէնի մեծ դքսութիւնը Կարլսրուէ մայրաքաքով Հունոսի մօտ, Մանհեյմ Հունոսի և Նեկարի վրայ, Հեյդելբերգ Նեկարի վրայ.

8) Օլդէնբուրդի մեծ դքսութիւնը Օլդէնբուրդ մայրաքաղաքով.

9) Մեկենբուրդ-Շվերինի և Մ. Ստրելցի մեծ դքսութիւնները. Շվերին ու Նեյստրելց մայրաքաղաքներով.

10) Ավանդ-Վեյմարի մեծ դքսութիւնը Վեյմար մայրաքաղաքով Խլի վրայ.

11) Աքրաննեան դքսութիւնները մայրաքաղաքներով՝ Կօբուրդ և Գօաա, Մեյնինգէն, Ալտէնբուրդ.

12) Բրաունշվեյգ դքսութիւնը Բրաունշվեյգ մայրաքաղաքով Օկերի վրայ.

13) Անդայլտ Դէսաու և Կեօտէն քաջաքաներով.

14) Եվարտուրպի, Լիպէյի, Ռէյսի իշխանութիւնները.

15) Ալյուդեկ իշխանութիւնը.

16) Ազատ քաղաքները, Համբուրգ Ելբայի վը-  
բայ, Բրեմեն Վեգերի վը-բայ, և Լիւբէկ Տրաւայի վը-  
բայ Ֆեռնան ծովի մօտ:

## ՅԱ.Ի.Ե.Լ. ՈՒ.Ա.Ծ:

**Աշխարհի հինգ մասների մե-  
ծուրիւնը:**

### § 1.

Աշխարհի մասների մեծութիւնը կարելի է նշ-  
անակել միայն մերձաւորապէս, որովհետեւ սահման-  
ները ամէն տեղ դեռ ճշգրտեամբ որոշուած չեն:

ա)	Եւստրալիա.....	160,000°	քառ. մլ.
բ)	Եւրոպա.....	181,000°	" "
գ)	Աֆրիկէ .....	545,000°	" "
դ)	Ամերիկա.....	750,000°	" "
ե)	և Ասիա.....	794,000°	" "

2,430,000 քառ. մլ.

### § 2.

**Բնակիչների թիւը:**

Աելի ևս դժուար է որոշելու աշխարհիս մասնե-  
րի բնակչաց թիւը, քան թէ մեծութիւնը. բնակ-  
չաց թիւը նոյնպէս կարելի է նշանակել միայն մեր-  
ձաւորապէս: Բորբ երկրի վը-բայ հաշվումէ 1,300 մլ.  
մարդուց աւելի.—այս թուից ընկնումէ

ա) Եւրոպային.....	290	միլ.
բ) Ասիային .....	800	"
գ) Աֆրիկէին .....	180	"
դ) Ամերիկային .....	75	"
ե) Աստղալիային .....	4	"

Ուրեմն, Եւրոպան աշխարքիս ամենալողամամարդ մասն է, որովհետև Ասիան թէև հինգ անգամ մեծ է Եւրոպայից, բայց ունի միայն երեք անգամ շատ քնակիչ. Աֆրիկէն մեծութեամբ երեք անգամ մեծ է, բայց պարունակումէ դրեթէ Եւրոպայի բնակիչների կէսը. Ամերիկայում մի քառու մղոնի փրայ գալիս է 100 մարդ, Աստղալիայում 24, իսկ Եւրոպայում համարեա թէ 2000 մարդ:

### § 3.

## Մարդկային ցեղերը:

Բոլոր մարդկի առաջ են գալիս մի դպյուից և այս պատճառով էլ բոլորը մի սեռի՝ մի մեծ բնատնիքի անդամներ են: Բայց տաքութեան ու ցրախ (կրողման) և ուրիշ պայմանների զանազան ազգեցութիւնների պատճառով, դպյացել են հինգ դլիսաւոր մարդկային ցեղերը, որոնք զանազան վայրեն մարդկային ցեղերը կամ անդամները են:

1) Առաջնական կամ սպիտակ ցեղը. Նրան վերաբերում էն բոլոր Եւրոպացիք, բացի Լասլանդացիներից և ֆիններից ամենահիւսիսում, Ասիայի բնակիչները Օրի, Կասպից ծովի և գանդէսի այս կողմում, ուրեմն Հայերը, Թուրքերը, Պարսիկները, Արաբները, Հնդիկները ևայլն. Վերջապէս հիւսիսային Ավրիկէի և Նեղոսի մօտի Երկրների բնակիչները, զոր. Խափշիկները, Խղիստացիք, Բէրբէրները — Բարբարիկեան կոչուած իշխանութիւններում, Մաւրերը Ատլաս շղթայի երկու կողմերում ևայլն:

2) Մոնժուչն կամ գեղին ցեղը. Նրան պատկանում էն արևելեան Ասիայի բոլոր բնակիչները, Ղալմանիները կասպից ծովի մօտ, Մոնղոլիայում Բայկալեան լճի մօտ, Ցունգուսները Արևելեան Սիբիրում, Չինացիք և Չապօնացիք, Սամօնդները (ինքնակեր) հիւսիսային Ասիայում ևայլն, Եւրոպայում Լապլանդացիները և ֆինները հիւսիսային Ամերիկայում էսկիմոսները — Լաբրադոր թերակղզու վրայ և Գրեօնլանդիայում:

3) Ալուղական ցեղը կաշու սև գոյնով. Նրան պատկանում էն Խափշիկները Աէրիկէում, Կաֆրները, Հոտենտոտները ևայլն, Աստղալիայի շատ կղզեների՝ մանաւանդ արևելաեան, բնակիչները:

4) Անչենական ցեղը խարտեաշ կամ պղնձէ գոյնով, Նրան պատկանում էն Ամերիկայի նախնաւցից կաշու գոյնով և մարմնի կազմուածքով.

կան բնակիչները, բայց էսկիմոսներից հիւսիսային Ա-  
մերիկայում:

5) **Մալայնեռն ցեղը** ունի կինամոնի գոյն և  
բռնում է Կովկասեան ու Եթովպական ցեղերի մէջ  
տեղը. Նրան պատկանում են Մալակա թերակղզու,  
Հնդկաց Արհետելադոսի և Ովկիանոսի կղզիների մեծ  
մասի բնակիչները:

#### § 4.

### Արօնները:

Դեռ մարդկային սեռի կէսից աւելի գտնվում  
է կռապաշտութեան մէջ. Քրիստոնիաները Տաշվում  
են 3300 միլ. աւելի, մահմետականները մօտ 160  
միլ. Հրէաների թիւը սահմանափակվում է 5-6  
միլ. Հրէաները ցրուած են բոլոր երկրի վրայ:

Քրիստոնիաները բնակվում են միմիայն Եւրո-  
պայում, բայց նոյնպէս մեծ թուով գտնվում են աշ-  
խարքիս միւս մասներում:

Քրիստոնէութիւնը բաժանվում է Ուղղափառ  
Յունատառական Եկեղեցն, որի թագաւորում է արևելեան  
ու արևմտեան Եւրոպայում, տարածուած է նոյն  
պէս Սահայի արևմտեան ու հիւսիսային մասներում  
և հիւսիսային Ափրիկէում:

Այլումէտն կամ Ճառնու — Կալուիշտն եկեղե-  
ցին թագաւորում է զրեթէ միմիայն հարաւային

Նւրոպայում, Իրլանդիայում, Ամերիկայում՝ որ մի  
ժամանակ Սպանիային ու Պորտուգալիային էր պատ-  
կանում, միջին Եւրոպայի արևմտեան ու Հարաւա-  
յին մասներում և Լեհաստանում։ Նորա հոգեւու-  
րական զլուխն է պատը Հռոմում։

Բռղբականելի կրօնը տարածուած է հիւսիսա-  
յին Նւրոպայում և հիւսիսային Ամերիկայում։

Լուսաւորչական (կամ Գրիգորեան) կրօնը տարա-  
ծուած է Հայաստանում, նոյնպէս և Եւրոպական Տաճ-  
կաստանում։

**Մահմետանութիւնը** կամ Խորամը, տարածու-  
ած է Արաբիայից դէպի արևմտաք հիւսիսային  
Ափրիկէում և Յունաց թերակղզու վրայ, — և դէպի  
արևելք Պարսկաստանում և Հնդկաստանում մին-  
չեւ Փիլիպեան կղզիները։

#### § 5.

### Մարդկանց բաժանմունքը ի- րանց պարապմունքների հա- մեմատ:

Այն ազգերը, որոնք ապրում են միայն որսով  
և ձկնորսութեամբ, — կանգնած են լուսաւորութեան  
ամենաստորին աստիճանի վրայ, — յատկապէս լայբեն  
են, բնակվում են այրերում կամ ծառի Ճիւղերից

շինած ողորմելի խրճիթներում։ Այդպէս ապրում են, օրինակի համար, Հնդկաց ցեղերը Ամերիկայում, Բուշմէնները Ավրիկէում, Սամօնները Հիւսիսային Ասիայում, Նորհոլանդացիք, — Պեչերեգները Հրեղէն երկրում։

2) Թատկառական ազգերը, որոնք արում են միայն խաչարածութեամբ և իրանց հօտերով անց են կենում մէկ արօտից դէպի միաը. Նոքա բնակվումեն վրաններում կամ թեթև շինած խրճիթներում, և պարապվում են նոյնպէս յափշտակութեամբ։ Այդպէս են զոր. Վրդեղների խմբերը Ասիական Ռուսաստանում, շատ Մոնղոլան ցեղերը և Արաբները, զոր. Մալիները Բելադելգերիդում և այլն։

3) Այն ազգերը, որոնք պարապում են երկրագործութեամբ նոքա ունեն մշտնջնաւոր բնակարաններ և անշարժ սեպհականութիւն։ Արանց վերաբերում են հինունոր աշխարքի ազգերի շատ մեծ մասը։ Մշտնջնաւոր բնակարանները և երկրագործութիւնը միշտ ծառայում են ազգի հեռաւոր լուսաւորութեան հիման տեղ։ Լուսաւորեալ և քաղաքակիրթ ազգերը երկրագործութեան հետ միաւորում են նոյնպէս այլ և այլ արուեստներ և գիտութիւններ, առևտուլի են անում, հիմնում են գործարաններ, քաղաքներ են շինում, և կաղմում են տէրութիւններ։

§ 6.

Կառավարութեան ամենապարզ և նախնական ձևը Դահողէդականն է, հայրը տէր է իր սնում և լնտանեաց շրջանում, որոնք առաջ են եկել նրանից։ Եթէ կըբաղմանայ նորա սերունդը, այն ժամանակ գերդաստանի հայրը տոհմական իշխան է դառնում և այս արժանաւորութիւնը շարունակաբար մընումէ նորա տան մէջ։ Այդպիսի կառավարութիւնը դեռ այժմէ մենք գտնում ենք թափառական աղդերի մէծ մասում։ Վայրենիները ապրում են առանց հասարակական կարգի՝ ամէն մարդ իր համար. այնու ամենայնիւնրանք ունին մեծեր, որոնց առաջնորդութեամբ պատերազմ են տալիս, բայց խաղաղութեան ժամանակը նրանց նշանակութիւնը չնէն է։

Միայն այն ազգերի մէջ, որոնք ապրում են երկրագործութեամբ և քաղաքակիրթուած են, մենք գտնում ենք կարգաւորեալ կառավարութիւն, որ բաժանվումէ հետեւեալ մասների։


1) Ինքնիշխանական՝ որտեղբոլը աէրութեան իշխանութիւնը գտնվումէ մէկ անձի ձեռքում, և որտեղ անձնական կամքը իրաւունքի ու օրէնքի տեղէ բըռնում։ այսպիսի կառավարութիւնը գտնվումէ Ասիական տէրութիւնների մեծ մասում։

2) Միադէպական՝ որտեղ բոլոր թագաւորական իշխանութիւնը գտնվումէ մէկ անձի ձեռքում,

որ ներդործումէ նշանակած օրէնքներով։ Սիազեա-  
առական կառավարութիւնը լինումէ անհայտնի, երբ  
ինքնակալի կամքը օրինադրութեան միակ աղքիւրն է  
և միայն է վճռում կառավարութեան իւրաքանչիւր  
մասների բաները, — և սահմանափակեան երբ կառավա-  
րութեան նշանակալ մասներում պահանջումէ տէ-  
րութեան դասերի և ժողովրդական պատգամաւոր-  
ների համաձայնութիւնը։ Միապետները կրումեն զա-  
նազան տիտղոսներ՝ կայսր, թագաւոր, մեծ դուքս,  
դուքս, իշխան, և այլն։ Կառավարութիւնը լինումէ  
ընտրողական և ժառանգական։

3) Հաստիակեպունքն, որտեղ գերագոյն իշ-  
խանութիւնը գտնվումէ մի քանի անձանց ձեռում։  
Նա լինումէ առնուակեպունքն, եթէ գերագոյն իշխա-  
թիւնը պատկանումէ միմիայն հռչակաւոր ցեղերին,  
և առնելապեպունքն՝ եթէ կառավարութեան մէջ մաս-  
նակցումէ բոլոր ժողովուրդը։

Եւլուպայոււմ կայ միայն մէկ ինքնիշխանական տէ-  
րութիւն — այն է Տաճկաստանը։ Երեք մեծ հասա-  
րակետութիւն — Զուեցերիան, Ֆրանսիան և Սպա-  
նիան — մնացեալ տէրութիւնները մասամբ ան-  
սահման և սահմանախակեալ միասղետութիւններ են։



ՀՀ Ազգային գրադարան



NL0246442

